ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 184

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.29568ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2.29568 հա (ծածկագիրը՝ 10-008-0101-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, 2.00896հա-ի գործառնական նշանակությունը՝ վարելահող, 0.28672հա-ի գործառնական նշանակությունը խաղողի այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

(որոշման համարը խմբագրվել է հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի 05.08.2020թվականի թիվ 185 որոշումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 185

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ 086-183 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականին կայացված թիվ 086-183 համարների որոշումները վերահամարակալել որպես 087-184 համարների որոշումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 186

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԱՓ ՀԱՆԴԱՄԱՍԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺԱԾ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԸ՝ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 19. 04. 2019թ. -ի թիվ 46 որոշումը, հաշվի առնելով <<Արենի համայնքի բնակավայրերում չգործող, հին խողովակաշարերը և ջրագծերը կիսախողովակները ապամոնտաժելու և նրանցով նոր ծրագրեր իրականացնելու համար ստեղծված>> հանձնաժողովի 04.08.2020թվականի թիվ 4 արձանագրությունը Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի Թափ հանդամասից ապամոնտաժված երկրորդային շինանյութը՝ 343մետր ընդհանուր երկարության ասբոցեմենտյա խողովակները (200-250մմ տրամաչափի), օգտագործել Արենի և Չիվա բնակավայրերում իրականացվելիք աշխատանքների ընթացքում.

ա) Չիվա բնակավայրի 1-ին փողոց թիվ 2-րդ նրբանցքում նախատեսվող դրենաժային աշխատանքների իրականացման համար՝ 75 մետր 200մմ տրամաչափի, 80 մետր՝ 250մմ տրամաչափի,

բ) Չիվա բնակավայրի 10-րդ փողոցի ջրահեռացման համակարգի վերանորոգման համար նախատեսվող աշխատանքների համար՝ 68 մետր 250մմ տրամաչափի,

գ) Արենի բնակավայրի 36-րդ փողոցի ջրահեռացման համակարգի նորոգման համար նախատեսվող աշխատանքների համար՝ 80 մետ, 250մմ տրամաչափի

3. Հանձնաժողովի նախագահ Արմեն Եսայանին՝ ապամոնտաժված խողովակների մանացած 40 մետր 250մմ տրամաչափի խողովակները ի պահ հանձնել Չիվա բնակավայրի վարչական ղեկավար Ս. Հարությունյանին հետագա ծրագրերում օգտագործելու նպատակով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Արենի համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 187

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՈՒԿ ՆԻԿՈԼԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացի Մանուկ Նիկոլայի Մանուկյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Մանուկ Նիկոլայի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.18 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-0030, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 188

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1.43016 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 18-ի թիվ 54 որոշումը, Արենի համայնքի մրցութային հանձնաժողովի 24.07.2020 թվականի թիվ 1 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.43016 հա (ծածկագիրը՝ 10-006-0300--0382 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը 25 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված Արմինե Վանիկի Կոստանյանին:

- Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 404 020 (չորս հարյուր չորս հազար քսան) ՀՀ դրամ,
- Տարեկան վարձավճարը սահմանել 19 000 (տասնինը հազար) ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 783.8%-ը: Պայմանագրի կնքման պահին 1.43016հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի հողի հարկի

տարեկան դրույքաչափը կազմում է 2424 (երկու հազար չորս հարյուր քսանչորս) ՀՀ դրամ,

- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 1583 (մեկ հազար հինգ հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ:
- Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:
- Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:
- Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 189

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 172 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԻԿ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 43-րդ հոդվածի, առաջին մասի 5-րդ կետերի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներով Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 27 հուլիսի 2020 թվականի թիվ 172 որոշումը:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Վաչիկ Աթանեսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավթելու համար:

2. Արենի համայնքի տարածքում «Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու» մշտական հանձնաժողովին լիազորել (նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայան) քաղաքացի Վաչիկ Աթանեսյանին վարչական վարույթի գործի քննության համար սույն թվականի օգոստոսի 21-ին ժամը 12:00-ին հրավիրել Արենիի համայնքապետարան:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել քաղաքացի Վաչիկ Աթանեսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 190

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի 2018թվականի հունվարի 8-ի թիվ 1-Ա որոշման հավելված մեկով հաստատված Արենիի համայքապետարանի **աշխատակազմի քարտուղարի**(ծածկագիր՝ 1.2-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել լրացում՝

1. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1) հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմափակումների,վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի,ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

3) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով

4) մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.

5) վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 191

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 68-րդ և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 19.04.2019 թվականի թիվ 37 որոշումը, 31.07.2020թվականին կայացած աճուրդի թիվ 1-ից թիվ 9 արձանագրությունները, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.12066 հա (ծածկագիրը՝ 10-020-0149-0003, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 666 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սարգիս Գագիկի Ղարիբյանին:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.12973 հա (ծածկագիրը՝ 10-020-0149-0002, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 303 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սարգիս Գագիկի Ղարիբյանին:

3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.12214 հա (ծածկագիրը՝ 10-020-0150-0050, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 313 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Հակոբ Վահրամի Բաղալյանին:

4. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.12218 հա (ծածկագիրը՝ 10-020-0150-0049, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասը 285 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արայիկ Ժորայի Ներսիսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 192

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 10.10.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 57 ԵՎ 16.06.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 21 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թվականի թիվ 596-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 10.10.2019 թվականին տրամադրված թիվ 57 նախագծման թույլտվության մեջ «Վարդան Խալաթյան» բառերը փոխարինել ««Գինեթաս» ՍՊԸ» բառերով:

2. Արենի համայնքի ղեկավարի կողմից 16.06.2020 թվականին տրամադրված թիվ 21 նախագծման թույլտվության մեջ «Վարդան Խալաթյան» բառերը փոխարինել ««Գինեթաս» ՍՊԸ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 193

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 23.01.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02 ԵՎ 21.07.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 23.01.2020 թվականին տրամադրված թիվ 02 շինարարության թույլտվության մեջ «Վարդան Խալաթյանին» բառերը փոխարինել ««Գինեթաս» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Ռուզաննա Դրաստամատի Մարգարյանի» բառերով:

2. Արենի համայնքի ղեկավարի կողմից 21.07.2020 թվականին տրամադրված թիվ 16 շինարարության թույլտվության մեջ «Վարդան Խալաթյանին» բառերը փոխարինել ««Գինեթաս» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Ռուզաննա Դրաստամատի Մարգարյանի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 194

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 177 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք ի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 43-րդ հոդվածի, առաջին մասի 5-րդ կետերի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներով Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 29 հուլիսի 2020 թվականի թիվ 177 որոշումը:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Արայիկ Միքայելյանի նկատմամբ վարչական հարուցել
վարույթ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ինքնակամ զավ թելու համար:

2. Արենի համայնքի տարածքում «Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու» մշտական հանձնաժողովին լիազորել (նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Եսայան) քաղաքացի Արայիկ Միքայելյանին վարչական վարույթի գործի քննության համար սույն թվականի օգոստոսի 31-ին ժամը 12:00-ին հրավիրել Արենիի համայնքապետարան:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել քաղաքացի Արայիկ Միքայելյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 195

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ <<ՏՐԻՆԻՏԻ>> ՍՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 6-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը, ***որոշում է՝***

1. Արենի համայնքի վարչական տարածքում կառուցապատող <<Տրինիտի>> ՍՊԸ-ին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի,

2. Շինարարության թույլտվության հերթական համարն է 39-ը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 196

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՈՒՇ ԳՐԻՇԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացի Անուշ Գրիշայի Գրիգորյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Անուշ Գրիշայի Գրիգորյանին, Կարեն Աշոտի Գրիգորյանին և Հասմիկ Աշոտի Գրիգորյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.187 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0216-0054, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 197

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 36 ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԳԱՄ ԱՂԱՍԻԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով 31 հուլիսի 2020 թվականի Արենի համայնքի ղեկավարի թիվ 180 որոշմամբ հարուցված վարչական գործը այն է՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փողոցում գտնվող Արգամ Աղասիի Կարապետյանին հողօգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը պարզեց որ.

Արգամ Աղասիի Կարապետյանը (Բնակության հասցե՝ Արենի համայքն գ. Արենի 29փ.,1) Արենի համայնքի 36 փողոցում գտնվող հողօգտագործման իրավունքով իրեն պատկանող տարածքում խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետ Ա. Գրիգորյանի 26 հունիսի թիվ 1022.20 գրության հիման վրա 2020 թվականի հուլիսի 31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Արգամ Աղասիի Կարապետյանի

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանի 2020 թվականի հունիսի 26-ի թիվ 1022.20 գրությունը
2. Արենի համայնքի տարածքում վարչականիրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հանձնաժողովի 12.08.2020թ-ի թիվ 4 նիստի N1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը հաստատված եմ համարում հետևյալը՝

Վայոց ձորի մարզի Արենի համայնք գ. Արենի 29Փ., 1 տան բնակիչ Արգամ Աղասիի Կարապետյանի կողմից հողօգտագործման իրավունքով իրեն պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ինքնակամ շինության շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2020 թվականի հուլիսի 31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020թ-ի օգոստոսի 12-ին հրավիրվել է լսում,որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ փոստային առաքում/ Արգամ Աղասիի Կարապետյանը:

Վերջինս մասնակցելով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ պատրաստակամ է վճարել տուգանքը և օրենքով սահմանված կարգով օրինականացնել կառույցը:

Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին.

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում

կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը,շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են ենթակա է քանդման, իսկ հողամասը նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան,շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության կողմից սահմանված կարգով:

Տվյալ պարագայում Արգամ Աղասիի Կարապետյանը (բնակության հասցեն՝ Արենի համայնք գ. Արենի 29Փ. 1) Արենի համայնքի Արենի բնակավայրի 36 փողոցում գտնվող հողօգտագործման իրավունքով իրեն պատկանող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի ՝ ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 4-րդ հոդվածով, 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Արգամ Աղասիի նկատմամբ նշանակել տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի 36 փողոցում հողօգտագործման իրավունքով իրեն պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սույն որոշմամաբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 198

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՈՒՇ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՀՈՌՈՒՄՍԻՄԱ ԹՈՐՈՍԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.01548ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 2 0.00774ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացիներ Անուշ Արշալույսի Ղարախանյանին և Հոռումսիմա Թորոսի Դավթյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.01548հա բնակավայրերի նշանակության հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով 2 հողամասերի տալ հետևյալ հասցեները՝

ա) 0.00774հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0055-0003) և հողամասի վրա առկա շինությունը հասցեավորել Արենի համայնք գ. Արենի 3-րդ փողոց թիվ 25,

բ) 0.00774հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0055-0004) և հողամասի վրա առկա շինությունը հասցեավորել Արենի համայնք գ. Արենի 3-րդ փողոց թիվ 25/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 199

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԵՎՀԱՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.05 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

1. Ճանաչել Արենի համայնքի Չիվա բնակավայրի բնակիչ Արևհատ Գարեգինի Կարապետյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Չիվա բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.05 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Արևհատ Գարեգինի Կարապետյանի կողմից ավել օգտագործվող 0.05 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 200

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 195 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի ղեկավարի 20.08.2020 թվականի «Արենի համայնքի վարչական տարածքում կառուցապատող «Տրինիտի» ՍՊԸ-ին շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 195 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածի «N 39» թիվը փոխարինել «N 35» թվով:

2. Որոշման 2-րդ կետում «39» թիվը փոխարինել «35» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 201

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2,09270 հա (ծածկագիրը՝ 10-036-0104-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ պտղատու այգի/կորիզավոր/) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,38500 հա /ծածկագիրը՝ 10-025-0107-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝համայնքային սեփականություն:

3.Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 8,52000 հա /ծածկագիրը՝10-025-0101-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական , գործառնական նշանակությունը՝ վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

4.Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,48962 հա /ծածկագիրը՝ 10-008-0126-0004, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

5.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,12854 հա /ծածկագիրը՝ 10-020-0161-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

6.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,04977 հա /ծածկագիրը՝ 10-020-0161-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

7.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1,95800 հա /ծածկագիրը՝ 10-020-0122-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

8.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1,43396 հա /ծածկագիրը՝ 10-020-0122-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

9.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,10000 հա /ծածկագիրը՝ 10-020-0164-, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, գործառնական նշանակությունը՝գյուղատնտեսական արտադրական/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

10.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1,99718 հա /ծածկագիրը՝ 10-020-0124-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

11.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,11788 հա /ծածկագիրը՝ 10-020-0161-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

12.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,91271 հա /ծածկագիրը՝ 10-020-0122-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,

գործառնական նշանակությունը՝վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

13.Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,40800 հա /ծածկագիրը՝ 10-020-0122-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝վարելահող/ հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

(որոշման համարը խմբագրվել է հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի 05.08.2020թվականի թիվ 185 որոշումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 202

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՁՈՐԻ ԿԱՄՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.04683ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի դրական եզրակացությունը, սեփականության իրավունքի վկայականը, քաղաքացու դիմումը և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Ձորի Կամոյի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված Առևտրի սրահը՝ 77.83 քմ. , համարել օրինական,
2. Առաջարկել կառույցն իրականացրած Ձորի Խաչատրյանին վճարելու 1 ք.մ.՝ 1380 ՀՀ դրամ առևտրի սրահի համար՝ ընդամենը 107 406 ՀՀ դրամ, հաշվի առնելով ՀՀ կառավարության 17.04.2003 թվականի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:
3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական

նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 203

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԻՐԱՄԱՐԳ ԷԼԻԳՈՒՄԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՆՐԻԿԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԶԵԼԻ ՀԵՆՐԻԿԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 18.08.2020թվականի թիվ 4 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Սիրամարգ Էլիգումի Հակոբջանյանին, Հովհաննես Հենրիկի Հակոբջանյանին և Նազելի Հենրիկի Հակոբջանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.68504 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0328-0072, գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի) բարձրարժեք հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ պտղատու այգի (կորիզավոր) գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 204

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԻՐԱՄԱՐԳ ԷԼԻԳՈՒՄԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՆՐԻԿԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԶԵԼԻ ՀԵՆՐԻԿԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացի Հովհաննես Հենրիկի Հակոբջանյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ Սիրամարգ Էլիգումի Հակոբջանյանին, Հովհաննես Հենրիկի Հակոբջանյանին և Նազելի Հենրիկի Հակոբջանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.06355 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0328-0066, գործառնական նշանակությունը՝ խոտհարք) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգի (կորիզավոր) գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 205

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 6-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը, ***որոշում է***՝

1. Արենի համայնքի վարչական տարածքում կառուցապատող Արենի համայնքապետարանին տալ շինարարության թույլտվություններ՝ համաձայն սույն որոշման 1-4 հավելվածների,

2. Շինարարության թույլտվության հերթական համարներն են 36-39:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 206

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄԱՅԻՍ ՌՈԲԵՐՏԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.16238ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, սեփականության իրավունքի վկայականը, քաղաքացու դիմումը և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արամայիս Ռոբերտի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0.16238հա (ծածկագիրը՝ 10-008-0003-0039, հասցեն՝ գ. Արենի 36փողոց, 5 փկղ., տուն1) հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան երկրորդ հարկը, կից կառուցված աստիճանավանդակը, մառանը, նրա վրա կառուցված ծածկը՝ ընդամենը 209.16 քմ. և առանձին ծածկը՝ 15.37քմ՝ համարել օրինական,
2. Առաջարկել կառույցն իրականացրած Արամայիս Ծատուրյանին վճարելու 1 ք.մ. 690 ՀՀ դրամ բնակելի տան երկրորդ հարկի և կից կառույցների համար՝ 144 321 ՀՀ դրամ, 1քմ 414 ՀՀ դրամ առանձին ծածկի համար՝ 6363 ՀՀ դրամ՝ ընդամենը 150 684 ՀՀ դրամ, հաշվի առնելով ՀՀ կառավարության 17.04.2003 թվականի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:
3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,
4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ՝ ՀՈՎԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ